



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2023 թվականի N 1979 - Ա

«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ «ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 9-րդ և 13-րդ հոդվածները և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը
ո ր ո շ ու մ է.

1. Լուծարել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն) (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Կոմիտասի պողոտա 49/5, 0051, պետական գրանցման համարը՝ 222.120.00414) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ ընկերության լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ստեղծել

լուծարման հանձնաժողով՝ դրա կազմում ընդգրկելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի (երկու անդամ՝ լուծարման հանձնաժողովի նախագահ և անդամ-քարտուղար), Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (մեկ անդամ) ներկայացուցիչներին:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ լուծարման հանձնաժողովի ստեղծումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել ընկերության համապատասխան փաստաթղթերի և գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, արժեթղթերի ու գույքային իրավունքների հանձնումը լուծարման հանձնաժողովին:

4. Սահմանել, որ՝

1) ընկերության պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո դերիտորական պարտքերի ստացման և այլ պահանջների իրավունքները վերապահվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը.

2) ընկերության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքի առկայության դեպքում այն հանձնվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ սույն որոշման 5-րդ կետով հիմնադրվող «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնելու նպատակով:

5. Հիմնադրման միջոցով ստեղծել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն):

6. Սահմանել, որ կազմակերպության գործունեության հիմնական առարկան է դեղերի և բժշկական արտադրատեսակների շրջանառության պետական

կարգավորման ոլորտներում փորձաքննությունների ու մասնագիտական դիտարկումների իրականացումը, իսկ նպատակն է դեղերի և բժշկական արտադրատեսակների շրջանառության կարգավորման գործընթացների իրականացումը՝ ներառյալ՝

1) դեղերի գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման նպատակով փորձաքննությունների իրականացումը.

2) բժշկական արտադրատեսակների գրանցման նպատակով փորձաքննությունների իրականացումը.

3) կլինիկական փորձարկումների (հետազոտությունների) թույլտվության տրամադրման նպատակով փորձաքննությունների իրականացումը.

4) դեղերի արտադրության և դեղերի մեծածախ իրացման գործունեության լիցենզավորման նպատակով փորձաքննությունների իրականացումը.

5) բժշկական արտադրատեսակների արտադրության և սպասարկման գործունեության լիցենզավորման նպատակով փորձաքննությունների իրականացումը.

6) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից արտահանվող դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի և բժշկական արտադրատեսակների փորձաքննությունը.

7) գրանցվող դեղերի և բժշկական արտադրատեսակների տեղեկատվության (բժշկական կիրառման հրահանգի (դեղի ընդհանուր բնութագրի) և օգտագործման հրահանգի (ներդիր-թերթիկի) հայերեն տարբերակների մշակումը (լսմբագրումը).

8) դեղերի և բժշկական արտադրատեսակների հետգրանցումային մշտադիտարկումը և ոխակերի կառավարումը.

9) դեղերի և բժշկական արտադրատեսակների գովազդային նյութերի փորձաքննությունը.

10) դեղերի և բժշկական արտադրատեսակների գրանցամատյանների վարումը.

11) հատուկ դիտարկումների իրականացումը և, անհրաժեշտության դեպքում, նմուշների լաբորատորային փորձաքննությունը.

12) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից արտահանվող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների հաշվառումը և հսկողությունը.

13) արտադրանքի որակի, անվտանգության և արդյունավետության հետ կապված շեղումների, թերությունների կամ կեղծման կասկածի դեպքում փաստաթղթային և լաբորատորային փորձաքննությունների իրականացումը.

14) դեղերի և բժշկական արտադրատեսակների շրջանառությունը կարգավորող իրավական ակտերի, ուղեցույցների, ծրագրերի նախագծերի մշակմանը մասնակցությունը.

15) դեղերի և բժշկական արտադրատեսակների վերաբերյալ տվյալների շտեմարանների վարումը.

16) դեղերի և բժշկական արտադրատեսակների վերաբերյալ իրազեկման միջոցառումների և դասընթացների իրականացումը.

17) միջազգային և միջպետական մասնագիտական կառույցներին անդամակցությունը և համագործակցությունը.

18) մասնակցությունը միջգերատեսչական համագործակցությանը:

7. Թույլատրել կազմակերպությանը որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել՝

1) պատշաճ լաբորատորային, կլինիկական, արտադրական, բաշխման, դեղագոյնության գործունեության կանոններին և որակի կառավարման համակարգերին համապատասխանության մասնագիտական դիտարկումներ.

2) Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի, բժշկական արտադրատեսակների փորձաքննություն.

3) դեղերի և բժշկական արտադրատեսակների անվտանգության և ռիսկերի կառավարման հետ կապված տեղեկատվության գնահատում, և, անհրաժեշտության դեպքում, հաստատում կամ համաձայնեցում.

4) լաբորատոր փորձաքննության ծառայությունների մատուցում.

5) արտադրանքի կարգավիճակի կամ ընթացակարգի գնահատում և եզրակացության տրամադրում.

6) գրանցանմուշի հետ նույնականության վերաբերյալ եզրակացության տրամադրում.

7) տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցում.

8) սեմինարների, համաժողովների և դասընթացների կազմակերպում.

9) դեղերի և բժշկական արտադրատեսակների վերաբերյալ հայերեն տեղեկատվության (առաջնային և (կամ) արտաքին փաթեթ, պիտակ, բժշկական կիրառման հրահանգ (դեղի ընդհանուր բնութագիր) և օգտագործման հրահանգ (ներդիր-թերթիկ), առողջապահության ոլորտի մասնագետներին ուղղված տեղեկատվական նյութեր և այլն) մշակում.

10) դեղագործական արտադրանքի անձնագրի (CPP) տրամադրում.

11) ռեֆերենստ դեղի հաստատում.

12) մասնագիտական հրատարակչական գործունեություն.

13) գիտահետազոտական աշխատանքներ:

8. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե» և «է» կետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին:

9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության լուծարումից հետո մեկամսյա ժամկետում՝

1) հաստատել կազմակերպության կանոնադրությունը և կազմակերպությանը հանձնվող գույքի կազմը և արժեքը.

2) ապահովել կազմակերպության պետական գրանցումը:

10. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում կազմակերպության գրանցման, կնիքի, դրոշմակնիքի ձեռքբերման, ինչպես նաև սույն որոշման համաձայն հանձնվող գույքի գրանցման ծախսերը կատարվում են ընկերության միջոցների հաշվին:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի փետրվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան